


# ՀԱՆ ԴԷՍ ՄԱՏԵՆ ԱԳՐԱԿԱՆ



## Կ Ա Ր Ա Պ Ն Օ Ր Հ Ա Ս Ա Կ Ա Ն

« Ես հիմ միայն, ո՛ր Եւտերպէ, եղէց անխօս եւ աներգակ .  
Էս քն 'ի հոյլս թեւաւորաց տեսից շիջեալ զիմ արեւակ ,  
Մինչ համերամ մըշտերգ հաւուց հընչեն յափուռն այս հիւսարանչ՝  
Աղբերց եւ բլրոց վայելեալ կարկաչ » :  
Այսպէս ահա լալահառաչ մընչէր կարապ յօրհասն յետին  
Եւ լողանայր 'ի ցոլս արփույն վարդակարմիր երեկորին ,  
Որ 'ի բոսոր ներկանելով ըզլանջ հաւուն ապաքատակ  
Իջնանէր ըզլոյս կենաց անյատակ :  
« Ոչ խանդակաթ եմ 'ի կարկաչ սագին, եւ ոչ 'ի խօսս հաւուն ,  
Չեն ինչ փաղփիւնք սիրամարզին, թէպէտ երփին եւ պաղպաղուն .  
Այլ քոյր միայն ես 'ի գեղգեղ խանդամ, սով իմ ֆիլոմենէս ,  
Որ տատ 'ի մարմանդ կալ միշտ ախորժես :  
Հոգիահրաչ յափըշտակեալ երգոյդ 'ի ձայն անճառահրաչ ,  
Այիս զալեօք հատանեմ ես սողապաճեմ եւ հեզանազ ,  
Եւ 'ի ցոլ լուսացընցող յերկնից 'ի լիճն հայելանման  
Սըրարբիլ յաւէտ եւ լողանալ գամ :  
Քանիցս ըզձիք ըզճանոյի երգել ըզգեղ քո վառ 'ի վառ ,  
Տուընջեան իշխողդ ոսկեճաճանչ, եւ ընդ երեկ ծիրանեփառ .  
Երգել ըզլոյսդ աշխարհանազ, երգել եւ զիմն երանութիւն .  
Անցեալ ընդ թափ 'ի հայելոյ դիմաց արփույդ չընաշխարհիկ  
Եւ նընջել անդէն 'ի քուն անուշիկ » .  
Հնշտին յանուրջս ըզմոյլելով անդէն կարապ սիրատենչիկ  
Ի ծովալիճն ականակիտ ընկըղմեցաւ լըռիկ մընջիկ .  
Անդէն տրիտոնք արագ արագ, նոյն եւ նըհանօք Պոսիդոնի  
Հասին հարկանել պաշտօն սըխրալի :  
Իրբեւ ըզնաւ իմն հինաւորց՝ իրանն ամօք ծանրադանդաղ  
Վըտանկեցաւ, աւամդ երկինք, անկան թեւճակք յուսոցն 'ի կախ .  
Յայնժամ երգօք մըրմընջական մեղմեալ զալիսըն զամեհիս  
Եւ յեթեր դարձեալ, ապաստան յողիս :

Դէտ ալն 'ի վեր ամբառնալով մուսայն հաւուց գեղապատշաճ,  
Ետես ըստուեր երանափառ՝ որ յափրն կոյս ձայներ յառաջ .  
Էր նա Արփի-աստուած տուրնջեան եւ զիշերոյ աստեղափառ

Հրաշային փերոս բնաւից վեհափառ :  
« Ո՛վ գու սիրուն եւ նազելի էակդ յէից , յաւել առ նա ,  
Մայրժանք երգոց՝ զոր ընդ երկար սնուցեր 'ի սիրա քո լուակայ  
Եւ ոչեւ ոչ բաւէիր յառաջ քան զիմ եկաւորումն .

Ընձեռեալ արգ քեզ յէէն ինքնարուն » :  
Ի վախճան բանից իւրոց քնարաւ ձեռին հաւուն 'ի կից՝  
Դաշնակաւոր յորինեաց երգ՝ մըշտերդ երգոցըն անմահից ,  
Ձըքնազադեղ հաւն Ապողեոյ յափրչտակեալն 'ի ձայն երգոց՝

Տայր ճշ , արձագանգ հովտաց եւ բըլրոց :  
« Ոչ եւս սյլ կարօտիմ ես կընաւնտոցիդ , ո՛ կրատո .  
Մննմասինէ ես իսկ եմ՝ արդ աւուրց իմոց կորուսելոց .  
Բաց ըզմատեան քոյդ զըպրութեան , բաշխից հըսկողդ իմ կրիտս ,  
Աւանդել յեանոց զերգս այս քաղցրախօս :

« Ո՛ւր ես գու , գարուն  
Կենաց պատարուն .  
Ի թեւս զեփիւռից  
Եւ ծաղկանց երփնից՝  
Անցեր սըրավար  
Ոչ դառնաս յամայր :  
Ո՛ւր ես գու , ամառ  
Խանդից հըրավատ ,  
Որ ինձ բիւր հեշտից  
Աժեր ուղիս յերկնից .

Ո՛հ , չառնում ըզբոյր  
Շընչոյդ ընդհանուր :  
Ո՛ւր ես գու , աշուն  
Կարճիկ կինաց հուն ,  
Ուստ անցեալ ձըմեռ  
Ոժ ինձ մեծ աւեր .  
Ի քեզ , ո՛հ , անկաւ  
Գեղ աիոց դայար .  
Գեւ ցընդին խայրիք  
Աստեաց խարուսիք » :

Ըստուեր Արփուոյն-Ապողոնի զմայլմամբ երգոցն եկաց անդրէն ,  
Եղեւ գիշեր եւ վաղորդայն , երգոցըն վանդք տակաւ հընչեւն .  
Հաւիկն արգէն վերամբարձեալ յերկնից 'ի գրունսըն լուսեղէն ,

Ոչ կամի թողուլ զյարկսըն կաւեղէն :  
Կրտցիկն յեռեալ , ո՛հ , ատրաշէկ , 'ի լանջ սըրտին քընարաթեւ  
Տայր հաւուց փոխ ըզբարբառ իւր , մատուէքն յալիս շարժին յերեր .  
Ի ձայն գողտրիկ եւ փափկափանկ այսպէս մընչեաց նա համասփիւռ՝

Ամենից տալով ըզհրաժեշտս այս իւր :  
« Ողջոյն ընդ ձեզ երկինք , երկիր եւ որ 'ի նմայն հաւուց երամ .  
Ողջամբ մնասիլք բըլուրք 'ի վեր , որ արգ զինեւ շուրջ պատըրդամ .  
Քաղցր է հոգւոյս յետին 'ի նուագս յառել 'ի ձեր համապատկեր ,

Ձոր սստ նըկարէ լիճս հայիւրակերպ :  
Ո՛վ լուսին մահիկ եղջիւր , Հեփեստեայ հարսն յաւէժալոյս ,  
Փայլեցո՛ 'ի լիճ վըճիտ յարձաթափայլ նըշուլիցդ հոյս .  
Եւ դուք , շուշանք լուսացընցուգք , յերկնից 'ի լիճըն կապուտակ ,

Սըփոեցէք ըզթերթս առ շիրմաւս ատակ :  
Պայծառացիք ինձ , Արուսեակ , տուրնջեան 'ի լոյս մեծապայծառ ,  
Նորոգ կենաց երանութեան աւետել այդ լուսափարփառ .  
Ո՛ւր իցէք արգ , ո՛վ խօրք խորոց , զձեզ յաւէտ խնդրեն իմ աջ՝  
Լըսել յաւիտեան զերկնային աւալ :

Եկ, ով ծիծառն արագաթռիչ, ծանօթ ձայնիս իմ սուրհանդակ,  
Հաս յափուռն անգ Գոմյի եւ կարտայի արագ արագ.  
Գոյժ ցաւոց տուր իմ ձագուց եւ ընկերիս հաւատարմի

Թէ ոչ եւս է հայր, ոչ եւս ամուսին:

Ո՛վ դու նըշքեհ աստուածարեալ, թէ յոյց ելլես ւափանց աստի,  
Մի մոռանար ըզմունջ մուսայս՝ որ զըրնութիւն նըւագեցի.  
Հանդիր 'ի յոստ ուռւոյս անքոյթ, ուր յետ իմոյ լոզանալոյս՝

Փետրէի ըզհերս եւ զաղտ կենցաղոյս Խ:

Մինչ այս մինչ այն, ծագեաց արփի, հրեղէն գետովք լըցեալ զերկին.  
Յայնժամ կարապղն լուսերփեան պարզեալ ըզթեւ տուագաստին՝  
Խաղաց 'ի լիճըն լուսեղէն մըղտափարատ արեգական,

Թողեալ զմահացու մասանց հեթեթանս:

Համաձայնեալ 'ի քնար անճառ աստուածահօր գեղեցկութեան,  
Համակ զըւարթ եւ երանեակ՝ երգէր զարեւն երփներփական,  
Գեղածիծաղ երգէր ըլլիճ, երգէր զանտի կեանս երջանիկ՝

Սիրոյ, սըրբութեան ըստացեալ սըրտիկ:

Հանգոյն դիմաց իւր նազելի՝ էին եւ երգքն այն անուշակ.

Որով հերձեալ ախօտարեկ ըզմըկանունս այս վայրահակ,  
Գըտաւ 'ի դաշտն ելիւսական հուպ առնթեր Ապողոնի՝

Ի տիպն իսկարուն իւրըն գեղեցկի:

Երգն հիաքանչ եւ երկնային՝ յորմէ թափուր էր նա 'ի կեանս,  
Եղեւ նըմա յուժ սեփական, երգ կարապի մըրմընջական.

Նովաւ ելոյժ զանդամութիւս 'ի լուր ձայնին անմահական,

Երբ յապուչ հարաւ 'ի դէմս աստուածեան:

Երախտապարտ սըրտիւ մեծաւ բազմեալ 'ի գիրկս Ապողոնի՝

Այն ինչ լըսէր ըզմեղեգիս աստուածահրաչ երգոց նորին,

Եհաս ընկեր իւր սիրասուն՝ որ ելաց զինքըն մահուչափ,

Մոռացեալ ըզկեանս եւ համակ ըզչափ:

Ստուածուհին անմեղութեան ժողովեալ յինքըն զերանեալ՝

Անձեռագործ պըճնեալ 'ի զարդ՝ խեցեմորթեայ եհան յիւր կառս:

Լոզանալ միշտ 'ի լիճ յըստակ յաւէտաղուարճ առուգութեան

Բերկրել 'ի գարուն՝ կենաց անվախճան:

Ժուժա, ո՛վ սիրտ համբերատար եւ լըուսէր դու հանապաղ՝

Ոյց պակասին քեզ 'ի կենցաղս, զի դու կրբել անկարանաս.

Սակայն զեղուն եւ թաթաղուն ընձեռեսցին ձիբք գերարուն

Յանկանել տիողդ եւ 'ի ժամ մահուն:

Հ. Բ. Ս.